

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սաւեկան	6 "
վեցսակեայ	6 "
Արսասահմանի	
համար սարեկան	15 "
վեցսակեայ	8 "
Աւերիկայի համար	
սարեկան	3 ֆր.
վեցսակեայ	1.50 "

Իմանցման տողը ստանալիս երեսին համար 40 ս. կալ զի ջին երեսին համար 20 սակքիս է. երեսին աւերիկայի սակքներու համար 20 0/0 գեղջ կըլայ:

Վառնայի համար
ձեռք 10 սակքիս

ՇՈՒԹ

ԼՐԱԳԻՐ ԱՋԳԱՇԻՆ. ԲԱՂՄԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՒՇԱՐԹԻ ԵՒ ՇՈՒԹ ՕՐԵՐԸ

Նախկէ զի գրուի զի կիսիս
խմբագրութեան հաս-
ցիկն

Редакция на вѣстникѣ
„Паржумъ“
Варна

Redaction du journal
„Char oum“
(Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար
ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ ջին
սրեր

ՇՈՒԹՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ԳԼՏԻ Է ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

Դաշնակցական ընկերներին նամակներ ուղղելիս, ես շատ էլ յոյս չունէի թէ այսչափ շուտ նրա արձագանքը կ'ստացվէր բուն գործի վայրէջ, երկրից, ուղղակի կուրծքը կրակին տողը ընկերներից: Համոզված էի թէ պետք է արձագանքեն, բայց ինչպէս ասացի ոչ այսքան շուտ, ինչպէս երևում է գիտակցութիւնը լառալիքի մական քայլեր է արել, որ գրեթէ մի ամսվան ընթացքում Սուլթանի երկրից մեզ արձագանքեցին նրանք, որոնց ուսերի վրա է բարգված հայ պատագրութեան ծանր գործը և որոնք ամենախոշոր պատասխանատուութիւնը ունեն թէ ներկայ և թէ գալիք սերնդի առջև:

Ահա ինչ է գրում երկրից, գործի վայրից մի ընկեր, յոգնակի ձեռով խօսելով, այսինքն իր ընկերների կողմից էր

Յարգելի Պ. Վարդո,
Դաշնակցական ընկերներին ուղղուած Ձեր նամակները, կարծես նախախնամութեան կարգուած ձայններ էին, ուժովցնելու մեր անխելի մընացած համոզումները:

Կ. ի ընկերներս շատ ջանացինք իմաստներ համոզելու, բայց կարելի չկաւ. եւ ակամայ տեղի տուած ենք, սակայնով որ փրկարար պատճառ մը ըլլաւ եւ մեր այս անժամանակ տկար գործը յետաձգուի մի կանոնաւոր պատրաստութեան:

Մեզք չէ՞ տարբեր պայմաններու տակ արուած որոշում մը՝ արուած ըլլալուն համար միայն, գործադրել կըր պայմանները բոլորովին փոխուած են: Իմ կարծիքով Ընդհանուր Ժողովը եթէ հիմա որոշում տալ պետք ունենար, կարող էր այժմ ոչինչ չընել, բացի... կանոնաւոր պատրաստութենէ:

Մի այսպիսի փափուկ եւ պատճառական իրողութեան հրապարակու կը-

չում ընելով՝ փոստաբանութեան ձեռնախօսքներով շնորհաւորելով, ինչու առէք յայտնել ձեզ Ձերմ համակրանցս հաւատին

Երկրից հապճեպով սլացող գիտակցութեան այս ձայնը պայտոյց է որ մենք բուն իսկ ժամանակին ենք գտնակը վերքի մէջ խօսելու և գոհ ենք որ գրողի հետ անձամբ ծանօթ չենք և մեր միջի կապը միայն կուսակցական կապն է:

Մենք երկրի մի գիտակից ձայնին աւելի ենք հաւատում, քան երկրի պայմաններին անձանօթ հարկւարուոր ձայններին, ու այդ հաւատքով և պարտականութեան գիտակցութիւնով զինված կը մտնենք նոր տարու մէջ -- ամեն ճիշդ լծակներով որ երկրի գիտակցութիւնը և համոզումները չը խնդրվին այսինչ կամ այն ինչ մարմնի կողմից:

Նոր տարու առթիւ շնորհաւորում ենք երկրում գտնվող գիտակից զաշնակցականներին և մաղթում ուժեղ կամք իրենց համոզումները -- ի հարկէ այն համոզումները, որոնք միայն հայրենիքի շահին են ներկայ, առաջ տանելու համար:

ՔՐՈՒՄ--ԱՐԹԻԻԻԻ ԶԱԿԱՏԱԳԻՐԸ
ԵՒ Վ. Ա. Ա. Ն. Ա. Ա.
— 0 —
(Շար. նախորդ քիւնէն)

Այս, գիտ այդ նախնական խաւին մէջ իսկ ճարտանցին տարած էր յուսացուած յաղթանակը, ինքնապետ ճիւղին առաջին խօսքը պարտութեան նախնաքն էր արդէն եւ յետաձգումի երկրիմի հրովարտականքը ուրիշ բաներ չէին, բայց եթէ իր նեխած, փտած, ապականուած եւ քայքայուող էութեան մէկ պարտկուած խոստովանումը, սակայն այդ ոճրագործ ուժեղմը քաջութիւնը չուրեցաւ իր ինկանութիւնս բացայայտօրէն խոստովանելու խիղճը եւ գոթը չունեցաւ այս հարկւր հազարներով մարթուողներու զիպկոյտըրը զանց ընելու, տօթը չունեցաւ իր խաչագրելի արժեքը այդ անմեղ ու նուր-

բական կեանքերու գետացած արիւնովը ներկելու. ու նետեղ խոյտառակ ու զգուստիպ նոզա մըն ալ իր կողմէն:

Աւելորդ է հոս մի առ մի թուել այն ամօթալի ու եղբրական պարտութիւնները, որ կրեց ուսական նաւատորմն ու բանակը, առաջին քայլին իսկ ցոյց տալով իր բովանդակ անկարողութիւնը կոռուելու. սակայն չը կասեցաւ ան, չը խոստովանեցաւ իր ոճրը. ետ չը կեցաւ իր մարդասպան ձեռնարկէն:

Եւ այն ճիւղը, որ մէկ հատիկ կեանք մը միայն վնասողն ու ոչնչացողը կ'ուստի ու կ'առաջնաներու կենթարկէր, ինք անպատիժ նետեց հարկւր հազարներ թնդանօթներու ու սուխններու բերանը -- զրկեց կինը ամուսնէն, զաւակը հօրմէն, մորմէն, քոյրը կըրօրմէն, սիրելին իր սիրուհիէն, հարազատներ իրենց հօրազատներէն, եւ ան, կը կրկնենք, մնաց կատարելագէս անպատիժ:

Մինչ անդին ժողովրդին միամիտ զաւակները Հայրենիքի փրկութեան համար կը կռուէին, ապին, ճիւղը իր խնկարկունքով բազմի խորանին առջև թաշ եւ իկօն մը տընկած, շանդանիայի անուշաբոյր խունկով կը բուրվոթէին իրենց ամենակալ եւ ամենայաղթ աստուածը, օթիներ կը մատուցանէին անոր մեծափարթամ հզօր գահին... Իրենց մշտայաղթ բանակին կենացներ կը կոնծէին:

Պատերազմի սկիզբէն մինչեւ վերջը, -- եւ այս պատերազմի սկզբնաւորութեան առաջին նշանը տրուեցաւ Բօրդ Արթիւրով եւ կասկած չը կայ, որ նոյնը պիտի ըլլայ նաեւ վերջաւորութեան համար -- ուսական աստիճանաւոր մարդակերպներու բովանդակ ջանքը այս իրաբանցութիւն մէջ թշնամիին ճէճ կուրս մղելէ աւելի աւար փախցնել էր իրենց գոյութեան պայմանները բարելաւելու համար, որուն յիշրճ ապացոյցները մէկէ աւելի անգամներ արտայայտուեցան:

Անցեալ տարու ան փետրվարի 5-6 ին էր, որ կատուեցան բանակցութիւնները, նոյն ամսուայ 8ին էր, որ ճարտանական նաւատորմը տարաւ իր առաջին յաղթանակը, եւ սակայն ինչ գիրքի մէջ էր նոյն պահուն սխրահոյակ Ալիքսիեմը այս գոյժը առած ասան, -- իր անպէտ ու անօգուտ գոյութեան ծոռեղանգործութեան օրը կը հանդիսաւորէր, ինչ կացութեան մէջ էր ճերմակ ճիւղը, երբ իր հարկւրաւոր զոհերուն խոզ-

խողման լուրը կը ստանար, -- պարահանդէսի ուրախ եւ անհոգ եշտանքներով կը պանծար... Եւ բնական է, որ այսպիսի գլուխներ ունեցող բանակ մը անընդունակ էր օրինաւորապէս կազմակերպուելու, յատկաբան եւ ի վերջոյ յաղթանակելու:

Կարճ, սակայն եւ այնպէս անհուշօրէն ճակատագրային եղաւ Բօրդ Արթիւրի բաղդը... Մէկդի թողով Սամէտիկոսի 28 տարուան պաշարած Ազօթը՝ 10 տարուան Տրօվազան, միմիայն ժամանակակիցներուն գանք եւ ցոյց տանք. թէ գիտութիւնը, իր շատ մը բարիքներով հանդերձ, ինչպիսի հրէշային գէնքեր տալու վրայ է մարդուն ձեռքը, մէկի փոխարէն տասնեակներ, հարիւրներ մորթելու համար:

Ճիւղալիքար պաշարուելով 87½ օր շարունակ 1781ին, զոհ տուաւ քանի մը հազար միայն, Սեպտաստայօլ, 327 օրուան ժամանակակիցիցին 3-4 հազար կեանքեր եւ նոյնքան եւս վերաւոր, իսկ երկու հզօր ու յանգուզն իւրեքական անյաղող զիմագրաւու մենք, որոնք է՛ն տղտալին ճանչուած էին մինչեւ այսօր, -- կարսի եւ Իլէվլայինը -- տուած են միայն, առաջինն մէջ 6000 կեանք, 800 օթիներ եւ 30 ի յօժ թնդանօթ թշնամիին յանձնած, իսկ երկրորդին մէջ, զարձակ մօտ 6000 կեանք եւ 40,000 բանտարկեալներ զերի իսկ Բօրդ Արթիւրը...

Ոմանք ճարտանցիք, Բօրդ Արթիւրի վրայ յարձակման իրական ժամանակաշրջանը կը կոչեն օգոստոս 1-ով, այդ հաշուով տալով մեզ 152 օրուան ժամանակ մը, սակայն, մենք ըլլալով այն կարծիքէն, որ Բօրդ Արթիւրի յարձակումը սկսաւ, այս կամ այն ձեւի տակ, նոյն իսկ փետրվարի 8-9էն, այդ հաշուով կուրենանք, մօտ 10 ամսուան կամ 280 օրուան շրջան մը... մէկըրորդը Ճիւղալիքարի, քանի մը ամբսներով պակաս քան Սեպտաստայօլն ու իարթուրը, բայց եւ այնպէս այդ բոլորին տուած զոհերը չեն կարող հաւատարիլ այս հսկայ ճիւղին կուտուած կեանքերուն... Ճիւղ հաշիւը անձանօթ է զեռ, սակայն, մօտաւոր հաշուով իրար բերելով երկու կողմէ յայտարարուած պաշտօնական հաղորդագրութիւնները, կուրենանք մօտ 80,000 կեանքեր, բացի նոյնչափ վիրաւորներէն, որոնց 50 000ը կը պատկանի ճարտարին եւ միացեալը Ռուսաստանի:

Եթէ համաձայնինք ճարտանական

կարծիքին, թէ Բորգ Արթուրը սկը սաւ ուժակոծուիլ օգոստոսի սկիզբէն, այդ կարելի է ընդունիլ իրրեւ ցամաքային, որուն մէջ ճարտնացիք յետ մղուեցան տաւապիւական նկատուելու աստիճան անագին կորուստով մը: Երկրորդ անգամ, օգոստոսի ամենները, հակառակ ճարտնական նախնական յետ նահանջման, կրկին յարձակելով գրաւեցին մօտ հազար ուսու գերի եւ ատոր յաջորդող մէկ երկու նաւային ուրիշ յաղթութիւններ եւս տանելով մղուեցան զինագրուելի առաջարկ ընել, եւ օգոստոսի 17ին էր, որ Շիթաւէլ, կրկին կարած անքաղաքավարութիւն համարուելու աստիճան բարկութիւնով մը կը մերժէր ճարտնացի օֆիցերին առաջարկը, յայտարարելով՝ «թէ ուս զինուորը միմիայն յաղթիլ կամ մեռնիլ գիտէ, եւ ոչ թէ անձնատուր ըլլալ»:

(Շարունակելի)

ԿԸ ՊԱՅԱՂՁԵՆՔ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Իրաւ է, որ ջախջախեցիկք թուամեանի մը նման հրէշին գլուխը, փրկեցիկք անոր ճիրաններէն որբերը, զժբախտ պատանիները, սակայն ինչո՞ք միեւնոյն զարհուրելի կացութեան մատնել զանոնք, ինչո՞ք մեռելուն վէճերուն եւ գանգատներուն տեղի տալ, ինչո՞ք քանի մը խօսքով կամ տողով չը բացատրել եղելութիւնը, լուսաբանել վարանած ու չաւրած մտքերը:

Ճանրմ, կարեւորութիւն տալ շարժեր ատանկ մարդոց...

Այս պիտի ըսեն, ասով պիտի ազատին... ո՛չ, կը սխալին անոնք, որոնք կուզեն թող ըլլան այդ շուրթերը հողորդողները, ատոնց մէջ, շատ մը անճշտութեանց հետ և կան իրականութիւններ ալ, որոնցմէ մէկն է, էգնանանի որբերուն Պոլիս զըրկելը...

Թողով տակաւին ուրիշներ, այս միայն բաւական է դատապարտելու այդ զգուշելի ընթացքին ձեռնարկու-

ները, որոնք ատանց ամօթի, անանց ակնածանքի, խիզախ ու գարշելի համարձակութիւնը ունեցած են թիւրքական ճիրաններէն խուսափած հայ դժբաղդ մանուկները նետել կըրկին նոյն երկաթէ մագիլներուն մէջ, որպէս զի տարիներ առաջ այս կամ այն կերպով փրկուած հոգիները այս անգամ խոչտանգուին, մեռցուին... Ասիկա, ո՛չ միայն ոճիւր մըն է հայ մանուկներուն հանդէպ, այլ եւ քացարձակ դաւաճանութիւն մը ազգային արժանապատուութեան եւ անոր հետ միասին՝ հայ ժողովրդին ջերմօրէն դաւանած ու կառչած դատին:

Իսրիզի հայութիւնը որ ամենէն աւելի ազդու եւ ամենէն աւելի զիրին միջոցները ունէր այս հայ պատանիները իր անմիջական հսկողութեան տակ պահելու՝ զլացաւ այդ դերը իր ժամանակին եւ այսօր միմիայն՝ երբ խնդիրը հասունցեր եւ անցեր է, երբ անագին արժուէրներով հրապարակ կը խլացնէ 1—2 տարի առաջ ներկայ եկեղեցիի հետ դեր ունեցող այդ դարունները անպէտ ու անօգուտ շէնքը շինելու համար երկինք գետին դրդազանցելու աստիճան կը պոռային, կը կանչէին, էգնանաններու ու Մանթաշօֆներու զոնները կը բաղխէին, այսօր այդ մեռնոյն եկեղեցին ու զայն շինողները կը հալածեն և շանթեր կը թափեն անոնց գլուխը... Ունեցան եկեղեցի, — իրենց չփազանց ջերմեանք ու երկնային սխիթարիչ պատգամներու պապական հոգիներուն յազուրդ տալու համար—ունեցան հոգաբարձութիւն, ունեցան թաղական խորհուրդ—թէ եւ մատ մըն ալ վար քան Պոլսոյ թաղերունը—և այս բոլորով հանդերձ, ըլլալով որբեր ալ իրենց ջըթիւն տակ, չը կարողացան զսպիլ էգնանան մը կամ անոր գործակատարները, որպէս զի ներկայ խայտառակ ֆիթակօն տեղի շունենար եւ որբեր լաւ հանգիստ վիճակ մը ունենային եւ պատրաստուէին ապագայի համար:

Չենք գիտեր թէ ի՞նչ կընէ պոռնիկ զգացումներով եւ քաղաքարներով անտաւորուած մեծափոր մեքուպայի առաջնորդը, որը, իրապէս, ետեւէն եկող կօշիկ մաքրողի դերին ալ անընդունակ եւ անյարմար է...

— Սակայն վրանիս կը խնդան կոր... կըսեն անոնք միաբերան:

— Հա՛յ Աստուած պիւնիք տա՛յ, կանիճէ սրբակրօն պատուելին, իր սովորական նզովքով... Ար ի՞նչ անգին բաներ են եղեր աս հայ տղայ ըստածներու տղա՞ք, աղչուի սուղ բաներ էիք ձեզ հօրը մօրը տուեր... վրանիս կը խնդան եղեր... հէրպէթ պիտի խնդան, սատրազամէ տղաքներ էք որ չը խնդան վրանիք... մարդոց հացը կուտէք կոր... Շուտ ոտքի ելէ՛ք, ամենքը հոս կը նային... Պատանիները յոգնած ճարահաւճալով կը դիմեն առաջ ու դարձեալ կերպեն երգին առաջին համարիչները: Մտախնայութիւնն ու ոտքերու բաղխուժը, վայրագ ու գարշելի ծիծաղները զգալուն սիրտը կը փարատեն, կը գալարեն, կապիտաններէն մը ցուցատուն այդ քան, ծափերու չէր արժանացած... և զեռ պիտ շարունակէր այդ՝ զժբաղդ հայ պատանիները կրկին ու կրկին բեմ բերելու համար, եթէ քարոզիչ նախագահը ձեռքը վեր չը բարձրացնէր՝ ի նշան լուսութեան և չը հրաւիրէր պատուելին:

Ի՞նչ, միթէ էջմիածնայ Սինօրը զայն կարգած է առաջնորդ Բարիզի ճանօթ Պուլվառներուն և Լոնտօնի Բիկատիլիին երկարութիւնները չափելու և այլ տեսաններ ուսումնասիրելու համար...:

Այդ թրքական լիրբ ու ստրուկ ընազներով օժտուած մարդակերպը լուռ մնաց եւ լուռ թիւնն ալ խլելով՝ վիճեցնել ջանաց թուամեանի խընդիրը, այդ միեւնոյնը այսօր դարձեալ լուռ կը մնայ նաեւ այս մեծագէտ կարեւոր խնդրին առթիւ և, թերեւս, ով գիտէ, անոր դերակատարներուն ալ գրպանները կը շոյէ: Ուրեմն կը հարցնենք, ի՞նչ է իր դերը և ինչո՞ք կը մնայ այդ շրջանցիկ դերին մէջ, հակառակ իր բացարձակ անկարողութեան...:

Որբերը պիտի է վերադարձուին Բարիզ ամեն գնով, և այդ գործին մէջ իւրիւրեան ստիպուած է անել առաջնակարգ դեր մը, եթէ չուզեր իր մօրուքին վերջնական անմիջական որբ թէ պէտեւ ըլլալու էր շատ առաջ գոնէ հայ եկեղեցիին սրբութիւնները շարատարութիւնը համար...:

Ժամանակին թուամեանը հալածեցինք իրեն արժանի վարժուցիչ համեմատ. ան ինկաւ, զիտակեցաւ, և այսօր անոր գործը շարունակել կուզէ ուրիշ ձեւով մը տակ էգնանան մը: Եթէ մինչև այսօր զըստածները անճիշտ են, թէ զգուշ եւ հերքեն իր գործակատարները, եթէ չեն ուզեր թուամեանի և այլ նմաններու համար պատրաստուած ինկածութեան ցուրտ տապանին մէջ մուտք գործել...:

Այս առթիւ Բարիզի հայ գիտակից կարող մասին վրայ ծանրացող պարտականութիւնը մեծ է: Որքան որ ալ իրենց վրայէ ձգել ջանան այդ պատասխանատուութիւնը, չեն կըրնար իրապէս խուսափիլ, քանի որ ժամանակին մաս ու բաժին ունեցան զանոնք թուամեան յոգաբարձին ձեռքէն ազատելու համար:

Պարտականութիւն կը ծանրանայ նաեւ հոգեւոր դասին վրայ, եւ այս երկուքը, ինչպէս վերեւ ըսինք, ու նորէն կը կրկնենք, պարտաւոր են, ստիպուած են զոհացում տալ մե՛ր՝ հայ հասարակութեան կողմէ՛, եղած պահանջին եւ լուսաբանիլ դէպքերը:

Ողբի ցատկեց պատուելին, ալ ու ձախ հակաբնական ժպիտներ պարտ ցընելով ու սխաւ իր սէրայնպատտ ու ազգասիրական ճառը: —

— Տէր նախագահ, տիտ՛ք եւ տիկնայք:

«Այս երեկոյ, ինչպէս որ յարգելի պ Տիբուրն յայտարարեց, հաւաքուած ենք այստեղ պիտու համար Հայաստանի մասին: Անշուշտ այս անունը ձեզ մէջ շատերուն անծանօթ է, սակայն թիւ մը բացատրութիւնով պիտի տեսնէք որ շատոնց ի վեր ծանօթ է ձեզ այդ անունն ու երկիրը: Զեղով իւրաքանչիւրը, կասկած չունիմ, կը յիշէ թէ երբ մեր Տէր Աստուածը իր ժողովրդին աններելի շարութիւնը տեսնելով՝ իր նոյ ծառային տապան մը շինել տալով՝ ամբողջ աշխարհը ջրհեղեղով ողողեց, ազատելով միմիայն իր հաւաքարթի մտ ծառան եւ անոր ընտանիքը եւ իւրաքանչիւր աւանդուէն արու եւ էք մը: Երբ ջրը հեղեղը անցաւ, գիտէք անշուշտ, թէ այդ տապանը հանգչեցաւ լեռան մը վրայ, որուն անունը, կարծեմ այս

որոնց համար հայ մամուլին էջերը բաց են իրենց առջև: Ուրեմն կը պահանջենք: Մ. Յոյակ

ՅԵՂԱՓՈՒՄ. ԴԱՇԵՆ ԶԱՐԻԶՄԻ ԴԵՄ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Մի քանի շաբաթ արանից առաջ Պարիզում տեղի ունեցաւ Ռուսաստանի զանազան ազգերի զիմադրական և յիզափոխական կազմակերպութիւններին Պորհրդաժողով: Այլ եւ այլ ներկատուներով զեկտեմբերի 1ին միայն նրա որոշումները հրատարակութեան տրուեցին համաշխարհային մամուլի մէջ: Հ. Յ. Դաշենկցու թիւնը եւս ունեցաւ այդ ժողովում իր պատգամաւորը, եւ ան այսօր պայմանաժամը հանելուց յետոյ, ներկայացնում ենք հայ հասարակութեանը եօթնօրեայ խորհրդակցութիւնների արդիւնք՝ ժողովի վաւերացրած արձանագրութիւնը:

— օ —

ԽՈՐՀՐԴԱՓՈՂՈՎ

Ռուսաց կայսրութեան ընդդիմադիր եւ յեղափ. կազմակերպութիւնների

(Արձանագրութիւն)

Նկատելով՝

1) Որ միապետական (ինքնակալ) ուժերը ճակատագրական խոչընդոտէ հանդիսանում առաջադիմութեան ու բարեկեցութեան համար՝ թէ ուս ժողովրդի եւ թէ ուս կատարութիւններից ճշւած բոլոր ազգութիւններին՝ եւ որ այդ ուժերը քաղաքակրթութեան ժամանակակից դրութեան մէջ ներկայացնում է մի աւելմաստ ու յիասուկար արաւածութիւն (անարիւրօնիզմ):

2) Որ կուրեւ այդ ուժերի դէմ կարող է մղուել շատ աւելի մեծ ուժով ու աշողութեամբ, եթէ զանազան թէ ուս և թէ ոչ-ուս՝ զիմադրական ու յեղափոխական կուսակցութիւններին գործողութիւնները համաձայնաձ լինէին:

պզտիկներն անգամ կրնան ըսել ինձա Այս ըսելով՝ պատուելին նշան կընէ նստարաններու առաջին կարգին վերայ նապաստակի երկչոտութեամբ նստած շարք մը պատանիներուն, որոնցմէ մէկը, ուշիմութիւն ցոյց տալու հօրը թափով մը, ձեռքը վեր բարձրացնելով՝ միտն կը պոստայն պիտի սուր ձայնով մը, որ ամբողջ արահեց խնդաւրով սրտաճաք ու այրանքակ խնդաւրեքու տեղի կուտար: «Ո՛չ, տղաք, կըսէ պատուելին: Մի՞տք ուրիշ լեզու է, կարծեմ սխալ հասկցար: Վնաս չունի մի անջնար սխալ ըսելը ամօթ չէ: Որրիշը գիտե՞ այս լեզուի անունը...»

Արահին վարի ձայրբէն երեսուննոց մանուկ մը, իր աստուածաբանական հմտութեան հակայ հանճաքը ցուցնելու համար ներկաներուն, Արարար լեռը կը պոսայ ձկնօրսական ձայնով մը:

«Նորհակալ եմ, պարոն, կըսէ պատուելին: Լաւ, ուրեմն, այդ լեռը կը կոչուի Արարար, որ կը գըտնուելի Հայաստանի սրտին վրայ և որմնատած է երկիրը իր անունը՝ Արա-

ՈՐՅՈՒՆՔՈՏ ԱՆՅԵԱԼԷՆ

ՊԱՏՈՒԵԼԻՆ

— օ — Տոյ գիտելու կայսեր: Յիսուս

(Պաղանդէքս Պատուելի թուամեանին)

(Շար. նախորդ թիւէն)

Երգին քերած տպաւորութիւնը անբացատրելի է: Այս նկայ, ապուշ ու հետաքրքիր ամբողջ, չբաւականանալով ծափերով ոտքով ու զաւազանով ալ գետինը կը ձեռնէ, միացուելով ատոր բարձրագոյն խնդուքներու այլանդակ ներդաշնակութիւն մը: Պատանիները, ամօթով ու զայրոյթով բորբոքած, կը փութան իրենց ամօթները, մինչ քրիստոսատիպ բարոյիչ նախագահը կը խնդէ պատուելիին շարունակել տալ երգը, Պատուելին ոգեւորուած է... օրհնեալ է տէրը... սիւլուիա՛...:

— Տղա՞ք, նորէ՛ն նորէ՛ն երգեցէք, տեսէ՛ք, ինչպէս քէֆերինն եկաւ

3) Որ ներկայ վայրկեանը առանձնապէս բարեկալով է յայտնուում այդ բոլոր կուսակցութիւններէ համարալի գործունէութեան համար ընդդէմ ինքնակալ կառավարութեան որը վարկաբեկ և ուժասպառ է դարձել իր արկածասէր քաղաքականութեամբ յարուցած պատերազմի սոսկալի հետեւանքներով, — ներկայացուցիչները որոնք սահմանադրականներն են, Լեհական ազգային Լիգայի, Լեհական Սօցիալիստական կուսակցութեան, Սօցիալիստ յեղափոխականներէ կուսակցութեան, Վրացական Սօցիալիստ. Յիւրախաններէ կուսակցութեան, Յիւրախական կուսակցութեան գործունէ ղիմադրութեան և Զ. Յ. Դաշնակցութեան — հաւաքելով դիմադրական ու յեղափոխական կազմակերպութիւններ խորհրդածողովի՝ միաձայն որոշեցին անել այդ բոլոր կազմակերպութիւններէ անուանից հետեւեալ յայտարարութիւնը.

Ոչ մէկը ժողովին ներկայացող կուսակցութիւններէ, միանալով համարալի գործողութիւններէ համար, մի վայրկեան անգամ դրանով չէ մտածուած հրաժարել իր ծրագրի ու եւ է կէտից, իր տաքտիքի ու եւ է ձեւերից, որոնք համապատասխանուում են պահանջին, ու ժերին և դրութեան այն ասարակական տարրերի, դասակարգերի կամ ազգութիւններէ, որոնց թանցը նա ներկայացնում է:

Բայց միեւնոյն ժամանակ այդ բոլոր կուսակցութիւնները հաւաստում են, որ հետեւեալ հիմնական սկզբունքներն ու պահանջները հաւաստարապէս ընդունուում են բոլորի կողմից.

Ա) Բռնապետութեան ոչնչացումն. կառավարումն այն բոլոր բանի միջոցով, որոնք խախտեցին միջուկային սահմանադրական իրաւունքները:

Բ) Միապետական (ինքնակալ) կազմի փոխարինումն ազատ ուսման արկանով, հիմնուած ընդհանուր ձայնատուութեան վրայ:

Գ) Ազգայնական ինքնորոշման իրաւունք. որին ընդերում կրախաւորուած ազգայնական դարպացման ազատութիւն՝ բոլոր ժողովուրդներէ համար: Վերացումն ամէն տեսակ բռնութեան՝ ոռուս կառավարութեան

բառի աշխարհն կամ Արմենիա: Աւելի հետեւ երթալով, նոյնիս Միւնխենի սկզբնական զուգահեռուն մէջ լակ պիտի տեսնէք, որ Դրախտի կամ եղեմի պարտեզին մէջէն, ուրկէ մեր նախնայրերը իրենց անհնազանդութեան համար վրոճողուեցան. ձգելով ամբողջ աշխարհը նախնական սեղանի մէջ, որմէ միմիայն Յիսուսի արիւնով կարելի է մաքրուիլ. — կանցնէին երկու գլխաւոր գետեր, Եփրատ և Տիգրիս, որոնք իրենց ակը կտանն նոյն սյա Արարատէն: Հետեւաբար, պարզ է որ մենք անձանթով մը լինք ու գրեթէ է՛ն հին ու միակ միացող քրիստոնեայ երկիրը խաւար Արեւելքի մէջ...

Աւանդութիւնը մեզ կըսէ թէ, մեր փրկիչ Յիսուսը մահէն վերջը զրկած էր Հայաստան իր Թաթէնու եւ Բարթոլոմէոս առաքելայինը որոնք գալով հուն՝ զայն քրիստոնէութեան դարձուցին, իր հեթանոս վիճակէն: Բայց աւելորդ է ըսել, որ քրիստոնեան միշտ ենթակայ եղած է հալածանաց, ծեծերու տանջանաց, և ամեն տեսակ պատիժներու, որոնց տոկալով

կողմից՝ առանձին աղգութիւններէ վերաբերմամբ:

Յանուն այդ հիմնական սկզբունքների ու պահանջների՝ խորհրդածողովին ներկայացող կուսակցութիւնները կը միացեն իրենց ջանքերը՝ փութացնելու համար անխուսափելի անկումը այն բռնապետութեան, որը հաւաստարապէս անհաշտելի է իւրաքանչիւր կուսակցութեան առաջադրած հետեւոր ու բազմազան նպատակներէ իրագործման հետ:

«ԵՐԵՎԱՆ»

ԹԵՂԵԱՎԵՐՈՒԹԻՒՆ

Սիլիսդրե, 25 Դեկտ.

Հողիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց. —

3—4 ամիսներէ ի վեր հիւրաբար տեղս կը գտնուի Վառնայի Արժ. Տէր Սարգիս քհն. Ղարիպեանը, ու ամէն կիրակի իր շնորհալի քարոզներով կը միւրթարէ Սիլիսդրե քահանայից հայութիւնը: Նախորդ քահանայից ընդհանրապէս եպիսկոպի ընթացքներէն զընդու եկեղեցի չի յաճախող շատ մը անձնաւորութիւններ Տէր Սարգիս հօր հայրական խրատներէն զգածուած սկսան եկեղեցի գալ:

Իւր Սիլիսդրե գալու գեռ առաջին ամսուն տետրակ մը ձեռքը անձամբ սկսաւ իւնուիթէ իրանով և սրճարանէ սրճարան պըտրտիլ, հաւաքելու համար նըպաստ ծարձի թշուառ սովելոց, այս երկրորդ անգամն է որ ծարնոյ ի նպաստ հանգանակութիւնը կը լինի, կանխաւ եղած հանգանակութիւնը մօտ 300 ֆր. Դաշնակցական համակիրներու ձեռամբ եղած է ու հիմա դարձեալ Տէր Սարգիս հայր կրկին անգամ հաւաքեց շուրջ 200 ֆրանք եւ զրկեց Պատրիարքարան: Սիլիսդրե քահանայ հայութիւնը իր այս

սրբազան պարտականութեան մէջ շատ մը ուրիշ հայութեան տեղերէ վար շնաց, գովելի են իրենց ջանքերը:

Իսկ գալով Տէր Սարգիս հօր, ահա տեղար հայ քահանայ մը որ իր պատկանած ցեղին պատիւ կը բերէ, իւր ազգասիրութեամբը և ճշմարիտ հայ քահանայի պարտականութեամբը, շատ անգամներ իմացած էինք տէր Սարգիս հօր արժանաւորութիւնը ու ահա այս անգամ ակննատես կըլլանք անոր գործունէութեանը, և ոչ թէ միակ ծարնոյ նպաստի հաւաքմամբը այն նաև ազգասաց հրեանդաց և վերջապէս ամին տեսակ տառապելոց այցելութեամբը. վերջերս դարձեալ հանգանակութեան ելած է տեղւոյս ազգասաց համար ձմեռուան պաշար հայթայթելու: Վերջապէս իր այս գովելի յատկութիւններով դեռ եռամսեայ շրջանին մէջ ամէն յարգանաց արժանացած է թէ հայերէն և թէ նոյնիսկ օտարներէն: Ահա այս ամենը տեսնելով միտքերնս կուգայ մեծ տարանի այն զեղեցիկ խօսքը որ ըսած է քրիստոնէութեան առաջին վարդապետը. «Բազումք են կոչեալք և սակաւք են ընտրեալք»:

ձևն

ԴԵՆՎՈՑՆԻ ՍԻՒՆԸ

Հայը երբեք կըցած և պիտի կընար դարձնէ ի վեր իր ստրկութեան պատագեղին մէջէն բարձրեալ գիտակցութեան մակարդակը, որ ազատագրութեան արժանի ազգի մը անհրաժեշտ պայմանն է:

Այս վերջին երկրորդող տարիներ մատակարարեցին սակայն

մէկ կողմէն բնական և միւս կողմէն անբնական սարսափելի փոշի մը եթէ շտապ չի կարկառեր, Հայութեան գերագոյն երկրորդ սիւնը ենթարկելով մոսկովեան ապերասան ազգային փորձութեան զալարումներուն: Արդարեւ, ազգային գիտակցութեան այս աստիճանը—եթէ կարելի ըլլար դրամով ձեռք բերել նոյն հետայն—ինչ որ հայերուս համար կարելի ըլլալէ զատ հետեւ և անհաւատալի է, ահա միեւնոյն բանը տարբեր եղանակով, միայն թէ անբարոյական նպատակով, և արտաքին բարբարոսութեան ազդեցութիւնով եղաւ:

Հայութիւնը սոկային չի նմանեցաւ օձի մը որ անուշութիւնով դուրս գար ծովէն, զոհարբութեան շահին ալ անցած և վէրքը սրտէն էր. բանկող անոր գերմարդկային արժանապատուութեան զգացումները:

Վերքը շատ հին է. այն օրէն երբ Սլաւոնեան այդ խաղախ պետութիւնը խոնարհարար պէտքը զգաց Հայ ազգին կորովի բազուկներուն. դեռ երէկ, թարմ և ասպետականութիւնով մը՝ ներկա է ինք այդ ապերախտ պետութեանն: Բոլոր վերջի զարեւրջանի մէջ, ի գուր սշտարակեցիներ, Մելիքոֆներ, Ղուկասօֆներ իրենց հանճարն ու մեծութիւնը, իրագործեցին իսպաս այդ երկրին, պատմութիւնը անողոք է սակայն. այն լպիրջ ցարիզմը, որ իր մէջ արդարասիրութեան և երախտագիտութեան հոռու անգամ չի կրել՝ սինիք կուրուսիւնով մը, որ կործանումի մասնող կառավարութեան մը յատուկ է, չուղեց տեսնել հայութեան այդ զանգուածին մէջ եղող ոգիին բարձրութիւնը. ձուլել ուղեց իր մէջ ամենա-

որովհետեւ տէրը անոնց սրտերը Փարաւոնին նման խոտացուցեր էր...» Պատուելին հնդ մը շուրջը պնեց սակայն տեսնելով որ պահ մը առաւուան երգին ազդեցութիւնը պազած՝ հանդիսականներէն ոմանք քնանալու վրայ են և ոմանք ալ կը պատրաստուին դուրս ելնել այդ ձանձրացուցիչ պատմութիւնը, որ ամենօրեայ լսածնին է. չը լսելու համար ձայնը քիչ մը բարձրացնելով յախեց. —

— Կարծեմ, տիարք եւ տիկնայք լաւ է որ բանսխոսութեանս երկրորդ մասին անցնելէ առաջ հայ տղաքը մեզ երգ մը երգեն...

Եթեակ է, լաւ է կը պուտն ոմանք երգ մը... Թող երգեն...

Ու պատանիներուն յոգնած ու վրշտահար դէմքերը կը ծամածոնի եւ կուխաղանի մը գացողի քայլերով կուգան առաջ:

— «Ողորմէ՛ ինձ, կըսէ հայ պանուսելին, «Ազնիւ ընկեր»ի եղանակով:

(Շարունակելի)

միայն կարելի է, ինչպէս Պողոս առաքեալ կըսէ. իսպառ երջանիկ ու երանաւէտ արքայութեան արժանանալ... Թէպէտեւ այս կրօնքը շատ աղաւաղուած և ծուռ ու՝ սնապաշտ ծեսերով ընդունեց մեր ժողովուրդը, բայց և այնպէս ան կը հաւատար Յիսուսին, եւ այդ պատճառով ալ կը հայածուէր միշտ հեթանոս ազգերէն: Երկրափակուած ըլլալով անկրօն ցեղերէ, կուսպայտներէ և արեւապաշտ պարսիկներէն, ան ենթակայ էր ամեն օր, ամեն ժամ նորանոր արշաւանաց, որոնք մահու գնով կսպառնային իրենց սուտ կրօնքը ընդունել... Սակայն, այն բարի Աստուածը, որ իր Դանիէլ ծառան անվնաս պահեց զեհեհեհին եւ ապիւծի ձանկերուն մէջ, այն չգոր ու ամենակալ ենովան որ երբեմն իր ընտրեալ փա մը ժողովրդին ձեռքը կը մատնէր թշնամիին անթիւ, անհամար բանակները, և վերջապէս այն Աստուածը, որ 40 տարի շարունակ անապատին մէջ պահեց կերակրեց եւ առաջնորդեց իր ինքայնէ ժողովուրդը, մեզ ալ իր անսահման ոյժէն մաս մը կուտար այս

ահեղ փոթորիկներուն ղիմադրելու և ղիմանալու... Բայց իր գործածը անքննելի են մեզ սկսար մահկանացուներուս, ուստի չենք ուզեր իր բարբար կամքին դէմ մեղանշել անտեղի ենթադրութիւններով... Պողոս առաքեալ տեղ մը կըսէ, թէ ինչ որ Աստուծմէ կուգայ, շար թէ բարի, պէտք է այդ ի բարին ընդունիլ, որովհետեւ. շատ բաներ որոնք մեզի շար կերեւեան, ան մեր օգտին ու բարիքին համար ըրած է, և մենք ամեն պարագայի տակ. պարտաւոր ենք շնորհակալ ըլլալ իր ողորմած մարդասիրութեան...»

«Այսպէս օր մըն ալ մեզ մասնեց մեր թշնամիներուն ձեռքը, ինչպէս իր Իսրայէլ ժողովուրդը, որ իրմէ հետանալ սկսած էր, գերի զրկեց բարեկարգ ու յիսարհը շատ տարիներ առաջ, անոնց իր ամենակարգ ոյժը ցոյց տալու համար... Թիւրքերը եւ կան տիրացան մեր երկրին, սողեցին զայն արիւնով... Մեր եկեղեցին խլել ջանացին, խորտակեցին սուրբ տաճարները, աւերեցին ու այրեցին ամեն ինչ, մորթեցին ժողովուրդը,

բարբարիկ միջոցներով՝ ան՝ այդ
եղած է և այսօր բացարձակապէս
իրենց յայտնի նշանաբանը :

Հայ ազգը այլ եւո . ազատու-
թեան ակիբներուն վրայ իր նաւը
խարսխած և քաղաքակրթու-
թեան գաշտին մէջ իր արիւնտ
վրանը դրած՝ պիտի պաշտպանե
իրենները . ամենապատուաւոր
միջոցներով որ ստրկութիւնը
թօթափող ազգի մը յատուկ է :

Հայալինը պայքարը որ տարիէ
մը ի վեր սկսուած է պաշտօնա-
պէս շարի կառավարութեան կող-
մէ , հայութեան այդ գերագոյն
սիւնը բնականաբար շէր կրնար
հանդարտիլ այս անբնական եւ
անբարոյական կիրարկումին առ-
ջեւ դիմադրեց իր արեան գնով
որուն արձագանքը՝ աշխարհի ա-
մեն անկիւն հասաւ . Մինչեւ իսկ
Քալիֆիներու ըզըզը ճաթեցնե-
լու աստիճան հասան , անոր հետեւե
ցան դեռ շատերը Պիքոֆներ : Մեր
ողջակիզումներուն ի փոխան ուու-
սական ցած հոգի կառավարու-
թիւնը զգաց սակայն իր քաղա-
քական կուրուքիւնը : Հայու-
թեան այդ գերագոյն սիւնը իր
բարձրութեան վրայ է այսօր ,
մեր ուսասհայ եղբայրներու ցոյց
տուած անկեղծ և սրտայոյզ խի-
զախումը միանգամ ընդ միշտ
փարատեց մեր մէջ մութ ան-
կիւններ երբեք չըլող ամենա-
շնչին կասկածը անոնց ամենա-
նւիրական պարտականութիւննե-
րուն հանդէպ իրենց ազգային
պահպանումին և մասնաւորապէս
Հայաստանի փրկութեան գոր-
ծին վերաբերմամբ . այս
վերջինիս մասին իրենց
ցոյց տուած նուիրականութիւնը
ցնցեց Եւրոպայի Աշխարհին հետ
և Ամերիկահայ գաղթականու-
թիւնն ալ , որ սկսած է շարժիլ
գիտակցութեան շաւղով տակաւ
հասնելով պարտականութեան խո-
րանին առջեւ : Լիայոյս եմք որ
պիտի արգարացնէ ինքզինքը ,
իր բարոյական ու նիւթական կի-
րառումով աւելի քան որ ըրած է
ցարդ՝ Լեւոններով , Գայլ-Վա-
հաններով եւն . կսպասենք անոր
միահաղոյն յորդումին :

Խիզախ

Շ Է Ֆ Ի Ն

ԵՒ ՍԱՍՈՒՆԻ ՌԻ ՏԱՐՈՆԻ ԿՍՐՈՏ

Իրաւունքի Շէֆքի բարան թըշ-
ուաւ հայերու կացութիւնը իր
քրպանին ի նպաստ ծառայեցնե-
լու վաշխառուական գիտումով
տողորուած , առիթը գտեր է իր
Պուլկարիոյ և Ռուժանիոյ մէջ 20
25 30 սանդիմի չը ծախող թա-
փոն գրքերը քչեւ միամիտ հայ
ամբողին խոշոր գիներով , ու
իբր թէ մեծ զսոցութիւն յանձն
առնելով որոշ տոկոս մը նուիրել

կարօտեալներուն , իրեն պահելով
իր երազին մէջ չի տեսնուելիք
բաժինը :

Ու Վառնայի թաղական խոր-
հուրդն ալ պաշտօնապէս աշակից
կը գառնայ Շէֆքի այդ աղտոտ
հարստահարութեան , անոր գըր-
պանը լեցնելու :

Մեր առջեւ կը գտնուի գրա-
վաճառ Չարպահանէլեանի մէկ
«Պաթթիւր» , որուն մէջ ան ալ
ապառիկ , ուրեմն մեծ շահով ,
այդ գիրքերը ծախուած են այս-
պէս :

Table with 2 columns: Price, Quantity. 10 նէտա 4 ֆր. 12 Հայրեն. զոհեր 9 60 8 Խրապարտ 6 40

Կը շնորհաւորենք Վառնայի
բարեբաշտ և ազգասէր թաղակ.
խորհուրդը պաշտօնական բայց
անգիտակից թերեւս պաշտպանը
կը հանդիսանայ թշուառ հայերը
հարստահարող Շէֆքիին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Թուրք պատերազմական նա-
խարարը հրաժարական տուեր է
բայց Սուլթանին կողմէն ընդուն-
ուած չէ :

Հրաժարական տալուն պատ-
ճառը զինուորներու ուճիկ չի
վճարուելն է :

Պանք Օթոման ֆրանսական
գետպանին ստիպումին վրայ 50
հազար ոսկի կանխավճար մը ը-
րեր է թուրք կառավարութեան
ի հաշիւ ընելիք փոխառութեան :

Կառավարութիւնը կը հեր-
քէ լրագրական այն լուրերը , ո-
րոնցմով կը յայտարարուէին թէ
Թուրքիա չի ուզեր Պուլկար-
թիւրք համաձայնութիւնը գոր-
ծադրել :

Սուլթանական իրատեղով մը
Էտիբնէի գաղթականներուն կը
թոյլատրուի իրենց երկիրը վե-
րադառնալ :

ՌՈՒՍԻԱ

Ռուս հեռագրական գործակա-
լութիւնը կը հերքէ ներքին գոր-
ծոց նախարար Միրաքիին հրա-
ժարութիւն լուրը :

Ռուսական պաշտօնական շը-
լանակներուն մէջ ձայներ կը
բարձրանան մէնքալ Շթօսէլ եւ
սպայակոյտը դատի ենթարկելու
համար : Ազատականները կը ցան-
կան որ այդ դատը տեղի ունենայ
որովհետեւ կըսեն թէ հոն է որ
պիտի պարզուի պատերազմական
և ծովային նախարարութեան
մեղքերն ու սխալները :

Մոսկուայի Չեմստովոյի նախա
գահ իշխան Տրուբեցկոյի Յարին և
ներքին գործոց նախարարին ուղ-

ղած նամակը՝ մանաւանդ պաշտօ-
նական արգիւումէ վերջը՝ մեծ
յուզում յառաջ բերած է Ռու-
սիոյ մէջ :

Եւրոպական մէկ քանի թերթ
թերթու մէջ տպուած է Թօլսթոյին
երկու տարի առաջ Յարին ուղ-
ղուած մէկ նամակը , որով ուու
փրկիտիւր . գրագէտը կը յայտա-
բարէ թէ ժամանակ է ուու ժո-
ղովուրդը ազատել ներկայ ուե-
միմէն , որը միայն յատուկ է մի-
ջին Ափրիկէի վայրենիներուն :
Միապետութիւնը և ուղափառու-
թիւնը կը կաշկանդեն ուու ժո-
ղովորդին յառաջանալը դէպի
քաղաքակրթութիւն :

ՌՈՒՍՈՒՆԱՐՈՒԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄ

Գերմանիոյ կայսրը մեներալ
Նօգի և Շթօսէլը վարձատրած է
քաջութեան շքանշանով :

Ժոնէրալ Նօգի Թօքիոյ
հաղորդած է որ ժոնէրալ Նիկի-
տին և ամիրալ Վերէնիուս գերի
պիտի մնան , իսկ Բաս , Նատին
կաստենակի , ամիրալ Աւսթոմակի
Գրիգորովիչ , և ինժինէրներու
չէֆ Ռինպէկ Ռուսիա պիտի վե-
րադառնան :

Լօնտօնէն կը հեռագրեն թէ
Իալթիկեան նաւատորմի շրա-
մանատարը իմանալով որ ճար-
նացիները կը պատրաստուին
չինքը դիմաւորել հսկողութիւնը
կը նապատկած է :

Հրամանատարին օգնականը
յայտնած է որ նաւատորմի շը
հաղի մէկ ամսուան մէջ Հնդկա-
կան ովկիանոսը անցնի :

Ռուսիոյ նախարարական խոր-
հուրդը չէ կրցած վճարական որո,
չում մը տալ Պալթիկեան նաւա-
տորմի ճամբան շարունակելու
կամ ետ դառնալու համար : Մին-
չեւ երորդ և չորրորդ նաւատոր-
մի շին հասնելը Պալթիկեանը չի
պիտի յառաջ խաղայ , բայց Մա-
տակակարի քով ալ երկար սպա-
սել չպիտի կարենայ , որովհետեւ
Յրանսան չուզեր չէզոքութեան
օրէնքները ոտքի տակ տալ :

Լուրեր կը պտըտին որ ուու
կառավարութիւնը պարտաւոր-
ւած է ետ կանչել բալթիկեան
նաւատորմի շը , վերջը նոր կազ-
մութիւնը երկու նաւատորմի շե-
րուն հետ միասին մեկնելու նը-
պատակով :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—Բ. «Շարժում» նոր տար-
ուան թիւը տալէն յետոյ , տօնե-
րու ամբողջ շաբաթին մէջ չը
պիտի հրատարակուի :

Խմբագրութիւն

Հայաստանի քարտէզը սպառ-
ուած ըլլալով այլեւս անկարող
ենք դիմողներուն գոհացում
տալ . ուզողները կրնան գիմել
Ֆիլիպէ Տիար Անտօն Գօշի , ու
րուն մօտ գեռ կը գտնուին :

«Բարկէն Սիւնի» ընթերցարանի
Վարչութիւն

ՆՈՐ ԹԵՐԹԵՐ

Եգիպտոսի մէջ սկսած է հրա-
տարակուիլ «Հորիզոն» շաբաթա-
թերթը , որուն խմբագրական
մարմինը կազմուած է տօք . Վ.
Փաշայեանէ . Ա. Տէր Գալստեանէ
և Յ. Աստուրեանէ :

Գին 18 ֆր . արտասահման
8 ֆր . Եգիպտոսի մէջ :

Հասցէ

Վարչութիւն «Հորիզոն»
Գահիրէ

Նոյնպէս Գահիրէի մէջ սկսած
է հրատարակուիլ «Լուսաբեր»
թերթը շաբաթը երեք
անգամ . Գինն է 20 շիլինկ :

Հորիզոն կը խոստանայ լուրջ
թերթ մը ըլլալ . Յուսանք և հա-
ւատանք որ այդպէս ըլլայ , որով-
հետեւ Եգիպտոս լուրջ և դրա-
կան ուղղութեամբ թերթի մը
պէտքը ունի :

ԲԱԺԱՆՊՐԴՆԵՐՈՒՆ

—)o(—

Տարին վերջանալու մօտ է և մեր
բաժանորդներն շատերը դեռ իրենց
բաժանորդները չեն վճարած :

Կան և այնպիսիները որոնք երկու
տարեկան պարտք ունին : Ինչպէս
կերելի այդ մարդիկը կը կարծեն թէ
մենք թուղթը տէժբոր ձրի կառնենք ,
գրաշարները ու տպարաններն ալ ձրի
կաշխատին և մենք հաց չենք ուտեր ,
այլ օդով կապրինք :

Ինչ մը սպիւն ըլլալու են մեր չը
վճարող բաժանորդները , մանաւանդ
անոր համար որ մենք երբեք առանց
բաժանորդներու պահանջին թերթ
չենք զրկեր մարդու : Պահանջողը և
իր պարտականութիւնը կատարելու
տարրական գագուտէն զուրկ չը պի-
տի ըլլայ :

Խմբագրութիւն

ՅԱԿՈՒ Կ. Զ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(Սարապ) ՎԱՍԻՆԱ

Չանազան ընկերութեանց արժե-
թղթեր կը գնէ :

5-12

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна